V Միջազգային գիտաժողով

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

V International Scientific Conference

THE CURRENT ISSUES IN THEORETICAL AND APPLIED PSYCHOLOGY

WPA Co-Sponsored

Biennial Meeting of Armenian Psychiatric Assocition

"DIGNITY IN MENTAL HEALTH"

ՆՅՈՒԹԵՐ * PROCEEDINGS

23-25 . X . 2015

Yerevan Երևան Ереван

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ն Յ ՈՒ Թ Ե Ր

«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները»
V միջազգային գիտաժողովի

Երևան, Հայաստան
Հոկտեմբեր 23-25, 2015

YEREVAN STATE UNIVERSITY

P R O C E E D I N G S

Vth International Scientific Conference
“The Current Issues In Theoretical and Applied Psychology”

Yerevan, Armenia
October 23-25, 2015

ԵՐԵՎԱՆ – 2015 – YEREVAN

ՀՏԴ 159.9 : 6
ԳՄԴ 88
Տ 340

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ավանեսյան Հ. Մ. *- գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, հ. գ. դ., պրոֆեսոր, Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, ԵՊՀ*
Բաղդասարյան Ա. Մ. *- փ. գ. թ., դոցենտ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, ԵՊՀ*
Առաքելյան Մ. Ա. – *պ. գ. թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան, Իջևանի մասնաճյուղի տնօրեն*
Բերբերյան Ա.Մ. *- հ. գ. դ., պրոֆեսոր, Հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան*
Խաչատրյան Ն. Գ. *- հ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ*
Ավագիմյան Ռ. Ա. *- հ. գ. թ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան*
Ամիրյան Դ. Մ. *- հ. գ. թ., դոցենտ, «Բաց հասարակություն» ֆոնդ, Հայաստան*
Հովհաննիսյան Մ. Վ. – *մ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Պապոյան Վ. Ռ. *-հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Ասրիյան Է. Վ. *- հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Ստեփանյան Լ. Մ. *- կ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Մուրադյան Ե. Բ. – *կ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Գալստյան Ա. Մ. *- Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Հայրապետյան Դ. Ռ. *- հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Հարությունյան Ն. Ա. *- հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ*
Հովհաննիսյան Հ. Ռ. *- հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Մարգսյան Դ. Յու. *- հ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Գալստյան Ա. Ա. *- հ. գ. թ., Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Կարապետյան Ն. Ի. *– Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիայի գիտաշխատող, ԵՊՀ*
Պապոյան Մ. Ա. *- Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիայի գիտաշխատող, ԵՊՀ*
Ստեփանյան Մ. Գ. *– հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոս, ԵՊՀ*

Տ 340 «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի նյութեր, Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, 686 էջ:

Սույն ժողովածուն ներառում է 2015 թ. հոկտեմբերի 23-25-ը Երևանի պետական համալսարանում անցկացված «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի զեկույցների նյութերը:

ՀՏԴ 159.9 : 6
ԳՄԴ 88

ISBN 978-9939-52-747-5

УДК 159.9 : 06
ББК 88

Guaranteed to publication by Scientific Council of faculty of philosophy and psychology of Yerevan State University, (14 October, 2015)

ORGANIZING AND EDITION COMMITTEE

Avanesyan H. M. – Doctor of Psychology, Prof., Head of General Psychology Chair, YSU, Yerevan
Baghdasaryan A. S. - PhD., Ass. Prof., Dean of Faculty of Philosophy and Psychology, YSU, Yerevan
Araqelyan S. A. - PhD., Ass. Prof., Head of Ijevan Branch of Yerevan State University
Berberyan A. S. - Doctor of Psychology, Prof., Head of Psychology Chair, RAU (Slavonic), Yerevan
Khachatryan N. G. – PhD., Ass. Prof., Head of Personality Psychology Chair, YSU, Yerevan
Avagimyan R. A. - PhD., Ass. Prof., Vanadzor's State University after O. Tumanyan
Amiryan D. S. – PhD., Ass. Prof., Open Society Foundation-Armenia, Yerevan
Hovhannisyan S. V.– PhD., Ass. Prof., YSU
Papoyan V. R. – PhD., Ass. Prof., YSU
Asriyan E. V. - PhD., Ass. Prof., YSU
Stepanyan L. S. – PhD., Ass. Prof., YSU
Muradyan E. B. – PhD., Laboratory of Personality and Professional Activities Psychology, YSU
Galstyan A. S. – Laboratory of Personality and Professional Activities Psychology, YSU
Hayrapetyan D. R. - PhD., Ass. Prof., YSU
Harutyunyan N. A. - PhD., Ass. Prof, YSU
Hovhannisyan H. R.- PhD., Ass. Prof., YSU
Sargsyan D.Yu. - PhD., Laboratory of Personality and Professional Activities Psychology, YSU
Sahakyan M.M. - PhD., Assist., YSU
Stepanyan S. G. – PhD., Assistant, YSU
Galstyan A. H. - PhD., Laboratory of Experimental Psychology, YSU
Karapetyan N. I. - Junior Scientist, Laboratory of Experimental Psychology, YSU
Papoyan S. A. –Junior Scientist, Laboratory of Experimental Psychology, YSU

S 340 Proceedings of V International Scientific Conference «The Current Issues in Theoretical and Applied Psychology», Yerevan, «Edit Print», 2015, 686 pages.

This digest includes the proceedings of reports of «The Current Issues in Theoretical and Applied Psychology» V International Scientific Conference, which took place in Armenia, Yerevan State University on October 23-25, 2015

УДК 159.9 : 06
ББК 88

ISBN 978-9939-52-747-5

ԶՈՐԱԿՈՉԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԻՋՈՑ
Հակոբյան Հ. Գ., Լալայան Ա. Լ. 140

ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ
Հակոբյան Հ. Գ., Լալայան Ա. Լ. 143

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ
Հակոբյան Հ. Հ., Մարգարյան Վ. Հ. 145

ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
Հակոբյան Ն. Ռ., Խաչատրյան Ա. Գ. 148

ԱՌՈՂՋ ՄՆՎԵԼՈՒ ՎԱՐՔԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԽՈՂ ԵՎ ՉԾԽՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ
Հակոբջանյան Ա. Ռ. 151

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՏԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
Հարությունյան Ա. Ա. 155

ՎԱԽԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ
Հարությունյան Ա. Կ. 158

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Հարությունյան Գ. Ս. 162

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԱՎԱԶԻ ՄԻՋՈՑՈՎ
Հարությունյան Կ. Ռ. 165

ԿՆՈՋ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
Հարությունյան Հ. Հ. 169

ՑԱՎԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
Հարությունյան Ս. Հ. 171

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՒԻՑԻԴԱԼ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
Հարությունյան Ս. Հ., Գասպարյան Ա. Խ. 174

ԿՈԳՆԻՏԻՎ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԴԵՐԸ ԴԵՌԱՀԱՍԻ ԷԹՆԻԿ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
Հարությունյան Ն. Ա. 177

և մոլոկանների մոտ (80,2 %): Մոնոէթնիկ աղավաղված ինքնության պատկերը նկատվում է աղանդավոր դեռահասների մոտ (70 %), երբ էթնիկ ինքնության բաղադրիչը թույլ է արտահայտված ասկրիպտիվ բաղադրիչի նկատմամբ և մոնոէթնիկ ինքնությունը ստվերվում է կրոնական աղավաղված պատկանելիությամբ: Երկէթնիկ ինքնության պատկերը նկատվում է եզդիների ու ասորիների մոտ (60,3%), որոնց էթնիկ ինքնության բաղադրիչը չի համընկնում ասկրիպտիվ բաղադրիչի հետ:

Այսպիսով, փորձարարական հետազոտության հիմնական արդյունքները վկայում են նրա մասին, որ կրոնական Ես-ը էթնիկական Ես-պատկերի կարևոր համալրում է, դարձնում է այն ավելի ամբողջական՝ ձևավորելով էթնոկրոնական ինքնության բովանդակային կառուցվածքը:

Օգտագործված գրականության ցանկ.

1. **Дворникова Е. И.** Культура. Идентичность. Толерантность, М., 2007, 320 с.
2. **Дробижева Л.М., Аклаев А. Р., Коротеева В. В., Солдатова Г. У.** Демократизация и образы национализма в Российской Федерации 90-х годов, М., 1996, 382 с.
3. **Кон И. С.** Социологическая психология, Москва, 1999, 532 с.
4. **Леонтьев Д. А.** Современная психология мотивации, М., 2002, 343 с.
5. **СедовЛ. А.** Социализация,-в кн.: Давыдов Ю. А., Ковалев М. С., Филлипов А. Ф., Современная западная социология, М., 1990, 455 с. [154]
6. **Солдатова Г. У.** Психология межэтнической напряженности, М., 1998, 386 с.
7. **Стефаненко Т. Г.** Этнопсихология: практикум: Учебное пособие для студентов вузов, М., 1999, 320 с. [97-104]

SOCIAL-PSYCHOLOGICAL REVIEW OF ETHNORELIGIOUS IDENTITY

Hakobyan N. R. (NAS, Yerevan, Armenia); Khachatryan A. G. (ASPU, Yerevan, Armenia)

Key words: ethnic identity, religious identity, I-image, monoethnic environment.

The article presents some important inquiries of ethnoreligious identity at teenage age. It is pointed out that religious I-images are necessary additions to the cognitive field of ethnic I-images forming the structure of content of ethnoreligious identity.

ԱՌՈՂՋ ՍՆՎԵԼՈՒ ՎԱՐՔԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԽՈՂ ԵՎ ՉԾԽՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

Հակոբջանյան Ա. Ռ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

Սույն հոդվածում ներկայացված է առողջ սնվելու վերաբերյալ դիրքորոշումների և մտադրությունների համեմատական վերլուծություն ծխողների և չծխողների դեպքում: Հետազոտության ընտրանքն են կազմել 202 մասնակից (արական սեռ = 48 %, ծխողներ = 35 %), ուսումնասիրությունն իրականացվել է պլանավորված վարքի տեսության (Ajzen, 1985, 1987) վրա հիմնված մեր կողմից մշակված հարցարանով: Հետազոտության արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են փուլային բազ-

մաստիճան ռեգրեսիոն վերլուծության: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առողջ սնվելու վերաբերյալ մտադրությունն ավելի ընդգծված է չծխողների խմբում, ինչը նշանակում է, որ ծխելը յուրահատուկ գործոն է առողջ սնունդ օգտագործելու դիրքորոշումներում:

Հանգուցային բառեր. առողջության պահպանմանն ուղղված վարք, առողջ սնվելու մտադրություն, պլանավորված վարքի տեսություն, ռեգրեսիոն վերլուծության մոդել:

Առողջության պահպանումն ու բարելավումն ինչպես առանձին անհատների, այնպես էլ հասարակության կողմից ընդունվող բացարձակ արժեք և կարևորություն ունեցող գործընթաց է: Առաջնային նշանակություն ունենալով հանդերձ՝ շատ հաճախ առողջության պահպանումը սահմանափակվում է միայն առողջ ապրելակերպի մասին դատողություններով, իսկ դրա համար պատասխանատու լինելու կողմը մնում է բաց: Այս հակասությունը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով՝ սոցիալ-տնտեսական, կենցաղային-կազմակերպական, մշակութային և այլն: Նշված գործոնների շարքում, սակայն, ոչ պակաս դեր ունեն հոգեբանական գործոնները՝ անձի համոզմունքները և դիրքորոշումները, որոնցից ձևավորվում է մարդու՝ այս կամ այն վարքաձևն իրականացնելու մտադրությունը:

Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն էր ուսումնասիրել առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի դիրքորոշումային և դրդապատճառային համակարգերի, ինչպես նաև այդ վարքաձևերի իրականացման մտադրությունների առանձնահատկությունները:

Ստորև մեկնաբանենք, թե ինչպես կարելի է հասկանալ առողջության պահպանմանն ուղղված վարքը և ինչպիսի վարքաձևերն են համարվում այդպիսին: Ժամանակակից գիտական ուղղություններից մեկի՝ առողջության հոգեբանության մեջ առանձնացվում է ուսումնասիրության խնդիրների լայն շրջանակ, որոնց թվում է առողջությանն առնչվող վարքը և կանխարգելումը: Վերջինի ուսումնասիրությունները ներառում են ամենօրյա սովորությունները և տարբեր վարքաձևերը (ֆիզիկական ակտիվության աստիճանը, ծխելը, ալկոհոլի օգտագործումը, սննդօգտագործումը և այլն) ու դրանից բխող առողջական հետևանքների միջև կապերը: Այսպիսի հետազոտությունների գլխավոր նպատակն է բացահայտել փոփոխելի վարքի, ինչպես նաև այդ վարքը պայմանավորող գործոնների (սեռ, ազգություն, հիվանդության ընտանեկան պատմություն, անձնային գծեր) առանձնահատկությունները [6]:

Սույն հոդվածում ներկայացված է առողջ սնվելու վերաբերյալ դիրքորոշումների և մտադրությունների համեմատական վերլուծություն ծխողների ու չծխողների դեպքում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատականների համաձայն՝ յուրաքանչյուր տարի մոտ 130 մլն. եվրոպացի տառապում է սննդային ծագման հիվանդությամբ [3]: Առողջ սնվելու հիմնական բաղկացուցիչներն են ոչ հագեցած յուղայնությամբ կերակրի օգտագործումը, մրգերի, բանջարեղենի և ընդեղենի օգտագործումը, շաքարի և աղի քիչ չափաբաժնի օգտագործումը, արագ սննդից հրաժարվելը, նախաճաշելը, ճաշերի ընթացքում քաղցի զգացումը չհագեցնելը [7]: Ծխախոտի և ծխելու վնասակարությունն ու դրա կանխարգելումը հանրային քաղաքականության բնույթի հարց է: Ծխելը նպաստում է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը: Համաձայն 2009 թվականի վիճակագրական տվյալների՝ Հայաստանում մեծահասակ (16-ից սկսած) բնակչության 27 %-ը կանոնավոր (ամենօրյա) ծխող է, ուր տղամարդկանց մասնաբաժինը կազմում է 52 %, իսկ

աշխատունակ տղամարդկանց (20-ից բարձր) 57.7 %-ը ծխող է: Տղամարդկանց շրջանում ծխախոտամոլության նման պատկերը երկրում պայմանավորում է այն հիվանդությունների հիվանդացության բարձր ցուցանիշը, որոնց համար ծխախոտի օգտագործումը հիմնական ռիսկի գործոն է [2]: Հետազոտությունները ցույց են տվել, որ նիկոտինը փոփոխության է ենթարկում հիպոթալամուսում առկա քաղցի և հագեցվածության ռեցեպտորները, ինչի արդյունքում ուտելիս ծխողների օրգանիզմում ավելանում է նիկոտինի պահանջը: Դա հետագայում կարող է նվազեցնել սննդակարգը, եթե ծխողն ընդհատում է ուտելը՝ ծխելու համար [5]: Այսինքն՝ ծխելու հետևանքով առաջացած ֆիզիոլոգիական նման փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում նաև հոգեբանական մակարդակում՝ խոչընդոտելով վարքի իրականացման համար համապատասխան կոգնիցիաների ձևավորմանանը: Որպես առողջության պահպանմանն ուղղված վարքաձև՝ առողջ սննդի օգտագործումը ենթադրում է նաև առհասարակ առողջ ապրելակերպի վերաբերյալ դիրքորոշումների առկայություն: Ծխելու կամ չծխելու ընտրությունը ևս առողջության պահպանման վերաբերյալ դիրքորոշումների համակարգ է արտացոլում, ուստի մեր կողմից ենթադրվում էր, որ չծխողներն ավելի են հակված առողջ սնունդ օգտագործելու, քան ծխողները:

Հետազոտության ընտրանքն են կազմել 202 մասնակից (արական սեռ = 48 %, ծխողներ = 35 %), ուսումնասիրությունն իրականացվել է պլանավորված վարքի տեսության (Ajzen, 1985, 1987) վրա հիմնված մեր կողմից մշակված հարցարանով: Հարցարանի մշակման գործընթացի մասին ներկայացված է մեկ այլ հոդվածում [1]: Ըստ պլանավորված վարքի տեսության՝ մարդկանց վարքը պայմանավորված է երեք տիպի համոզմունքներով. վարքի սպասվող արդյունքների ու դրանց գնահատման վերաբերյալ համոզմունքներով (վարքային համոզմունքներ), հեղինակավոր անձանց սպասելիքների վերաբերյալ համոզմունքներով, այդ սպասելիքներին համապատասխան գործելու մոտիվացիայով (նորմատիվ համոզմունքներ) և վարքը խթանող կամ խոչընդոտող գործոնների առկայության վերաբերյալ համոզմունքներով ու այդ գործոնների ուժի ընկալմամբ (վերահսկման համոզմունքներ): Այս համոզմունքներից յուրաքանչյուրն իրենց հերթին ձևավորում են բնութագրական խմբեր, որոնք ազդում են վարքի մտադրության վրա: Վարքային համոզմունքները ձևավորում են վարքի իրականացման բարենպաստ կամ անբարենպաստ դիրքորոշումներ, նորմատիվ համոզմունքները ձևավորում են սոցիալական ճնշման արդյունքում սուբյեկտիվ նորմը, իսկ վերահսկման համոզմունքները ձևավորում են ընկալվող վարքային վերահսկումը: Դիրքորոշումների, սուբյեկտիվ նորմի ու ընկալվող վարքային վերահսկման համադրումն ընկած է վարքի իրականացման մտադրության հիմքում: Որպես կանոն, որքան բարենպաստ են դիրքորոշումներն ու սուբյեկտիվ նորմը, որքան մեծ է ընկալվող վարքային վերահսկողությունն, այնքան ավելի մեծ է տվյալ վարքն իրականացնելու անձի մտադրությունը: Ունենալով ներկա վարքի վերահսկողության բավարար մակարդակ՝ մարդիկ հակված են համապատասխան հնարավորության դեպքում իրականացնելու մտադրությունները [4]: Այսպիսով, պլանավորված վարքի տեսության հիմնարար գաղափարն այն է, որ վարքը կարելի է կանխատեսել մտադրություններով:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են փուլային բազմաստիճան ռեգրեսիոն վերլուծության (անգլ.՝ stepwise multiple regression): Ինչպես ծխողների, այնպես էլ չծխողների խմբերում առողջ սնվելու վերաբերյալ մտադրությունը դիտարկվել է որպես կախյալ փոփոխական, իսկ որպես կանխորոշիչ փոփոխականներ (անգլ.՝ predictor variables) առաջին փուլով դիտարկվել են դիրքորո-

շումները, երկրորդ փուլով՝ սուբյեկտիվ նորմը, իսկ երրորդ փուլով՝ ընկալվող վարքային վերահսկողությունը: Առողջ սնվելու մտադրության համար հաշվարկված ռեգրեսիոն մոդելի համաձայն՝ ծխողների խմբում վարքն իրականացնելու մտադրությունը պայմանավորված է սուբյեկտիվ նորմով ($F_{1,67} = 32.824$, $p < 0.001$) և դիրքորոշումներով, որոնք ապահովում են 2% հավանականություն ($F_{1,66} = 4.127$, $p = 0.46$): Սա նշանակում է, որ ծխողների համար առողջ սնունդ օգտագործելու մտադրության վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ նշանակալի անձինք, սակայն դիրքորոշումային համակարգում մտադրության իրականացման կոգնիտիվ բաղադրիչը, կարելի է ասել, լիարժեք ձևավորված չէ: Ի տարբերություն ծխողների՝ չծխողների խմբում առողջ սնվելու վերաբերյալ մտադրության համար կանխորոշիչ են դիրքորոշումները ($F_{1,123} = 47.035$, $p < 0.001$), ընկալվող վարքային վերահսկողությունը՝ ($F_{1,122} = 16.062$, $p < 0.001$) և սուբյեկտիվ նորմը՝ ($F_{1,121} = 6.882$, $p = 0.10$): Ռեգրեսիոն վերլուծության այս մոդելի համաձայն՝ չծխող մարդկանց դեպքում առողջ սնվելու մտադրությունը կախված է այդ վարքի վերաբերյալ ունեցած դիրքորոշումների, սուբյեկտիվ նորմի և ընկալվող վարքային վերահսկողության ազդեցությունից:

Ինչպես և ենթադրվում էր, առողջ սնվելու վերաբերյալ մտադրությունն ավելի ակնհայտ է՝ բոլոր երեք բաղադրիչների առկայությամբ չծխողների խմբում, ինչը նշանակում է, որ ծխելը յուրահատուկ գործոն է առողջ սնունդ օգտագործելու մտադրության համար: Սա կարող է մեկնաբանվել մի կողմից այն հանգամանքով, որ չծխող մարդիկ, մերժելով ծխախոտի օգտագործումը, ունեն նաև առողջ ապրելակերպի վերաբերյալ իրենց սկզբունքներն ու դիրքորոշումները, այդ թվում նաև՝ առողջ սնվելու վերաբերյալ: Մյուս կողմից, քանի որ ծխախոտի օգտագործումը կապված է ախորժակը ճնշելու հետ և շատ հաճախ, մարդիկ ծխախոտն օգտագործում են՝ նիհարելու նպատակով, ուստի բացակայում է նաև առողջ սնունդ օգտագործելու միտումը: Ծխելու նման ազդեցությունը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, որ անհրաժեշտություն կա քարոզելու առողջ սննդի մասին ծխողների շրջանում՝ աշխատելով առողջ սնվելու վերաբերյալ դիրքորոշումների ձևավորման վրա:

Օգտագործված գրականության ցանկ.

1. ***Հակոբջանյան Ա. Ռ.*** Առողջությանն առնչվող վարքաձևերի ուսումնասիրմանն ուղղված հարցարանի մշակում (պլանավորված վարքի տեսության հիման վրա), Երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողով: Գիտաժողովի նյութեր, մայիսի 23-25, 2014, էջ 87-90:
2. Հայաստանի հանրապետությունում ծխելու դեմ պայքարի 2010-2015 թվականների պետական ծրագիր - http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58005
3. Первый план действий в области пищевых продуктов и питания для Европейского региона ВОЗ на 2000-2005 гг. - http://apps.who.int/iris/bitstream/10665/108379/2/E72199R.pdf?ua=1
4. ***Ajzen Icek*** The Theory of Planned Behavior/ P. A. M. Lange, A. W. Kruglanski & E. T. Higgins (Eds.), Handbook of theories of social psychology, 2012, (Vol. 1, pp. 438-459)
5. ***Grant Janine*** The Effects of Smoking on Eating Habits, Demand Media - http://healthyeating.sfgate.com/effects-smoking-eating-habits-10747.html
6. ***Ogden Jane*** Health Psychology. A textbook, 4th edition, Open University Press, 2007.
7. ***Segan Joe and Farlex*** Medical Dictionary, 2012.

HEALTHY EATING INTENTIONS AMONG SMOKERS AND NON SMOKERS

Hakobjanyan A. R. (YSU, Yerevan, Armenia)

Key words: health behavior, healthy eating intentions, theory of planned behavior, model of regression analysis.

The current study aimed at revealing the specifics of the intentions towards healthy diet in groups of smokers and non-smokers. The theory of planned behavior (Ajzen, 1985, 1987) was tested by using a TPB questionnaire. Data from 202 respondents (male = 48 %) were collected. In the stepwise multiple regression, subjective norm was entered first for the group of smokers and explained 32 % of the variance in the behavioral intention ($F_{1, 67} = 32.824$, $p < 0.001$). Attitude towards healthy eating was entered second and explained a further 2% ($F_{1, 66} = 4.127$, $p = 0.46$). For the group of non-smokers, attitude was entered first and explained 27% of the variance ($F_{1, 123} = 47.035$, $p < 0.001$). Perceived behavioral control was entered second and explained 35% ($F_{1, 122} = 16.062$, $p < 0.001$). Subjective norm was entered third and explained 38 % of the variance in the intention ($F_{1, 121} = 6.882$, $p = 0.10$). Greater intention for healthy eating was revealed for the group of non-smokers. The results suggest that smoking is a specific factor for healthy eating intentions.

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՏԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հարությունյան Ա. Ա. (ԳՊՄՀ, Գյումրի, Հայաստան)

Սույն հոդվածում ներկայացվում է ազատության կոնցեպտի հին հունական տեսակետը: Մասնավորապես, քննարկվում են ազատության կոնցեպտի վերաբերյալ Պլատոնի ու Արիստոտելի մեկնաբանությունները և դրա ժողովրդավարական հասկացությունը: Հոդվածում ընդգծվում են նաև հայեցակարգային ընկալման տարբերություններն ու նմանությունները:

Հանգուցային բառեր. ազատություն, ստրկություն, ժողովրդավարական ազատություն, քաղաքական ազատություն, կամային ընտրություն:

Ի՞նչ է ազատությունը, ի՞նչ ենք հասկանում ազատություն ասելով, ինչու՞ է այն հարկավոր... ազատության կոնցեպտի վերաբերյալ այս և այլ հարցեր դարեր շարունակ հետաքրքրել են շատ փիլիսոփաների:

Տարբեր դարաշրջաններում ազատության հասկացությունն ունեցել է տարբեր ընկալումներ և տարբեր մեկնաբանություններ: Հնագույն դարերում ազատության կոնցեպտի մասին իրենց տեսակետով հատկանշական են հույն փիլիսոփաները:

Հատկապես ուշագրավ է ազատության կոնցեպտի երկու ըմբռնումները. ժողովրդավարականազատությունը և փիլիսոփայական ազատությունը, որը մեկնաբանվել է հատկապես Արիստոտելի և Պլատոնի կողմից: